



Շաբաթական Ջեկույց

28 Հունվար 2013

*Հասկանալ ֆինանսական շուկաները,
տեղեկատվությունը և վերլուծությունները
գիտակցված ներդրումների նպաստակով*



Ձեզ ենք ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների երկրորդ հատորի չորրորդ հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսատնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, սակայն անդրադառնալով նաև համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ասիայում:

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

- ԱՄՆ-ի վերջին զեկույցում ամերիկյան տնտեսության հեռանկարը դրական է նահատվել, թեպետ 2013թ. հաշվարկված աճը նվազեցվել էր մինչև 2 տոկոս, սակայն 2014թ. կանխատեսվում է ՀՆԱ-ի 3 տոկոսանոց աճ: Դրանական միտումների թվում էին տների ավելի ամուր շուկան, կապիտալի շուկայի աճը և գործազրկության բարելավված իրավիճակը, քանզի առաջին անգամ գործազրկության նպաստների դիմումները կրճատվեցին մինչև հնգամյա նվազագույն մակարդակը:


- Համաշխարհային տնտեսության առումով, ԱՄՆ-ի գնահատմամբ 2013թ. համաշխարհային տնտեսությունը կգրանցի 3,5 տոկոսանոց աճ՝ պայմանավորված Չինաստանի և ԱՄՆ-ի տնտեսությունների աճով: 2013թ. հեռանկարը Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանների համար ևս բարենպաստ էր՝ կապված նավթի ու ապրանքների բարձր գներ, ինչպես նաև գումարային փոխանցումների հետ:
- ԱՄՆ-ի հեռանկարը եվրոգոնայի պետությունների համար կենտրոնացավ 2013թ. շարունակվող տնտեսական անկման վրա ներառելով աննշան աճ Գերմանիայում և լուրջ Իտալիայի և Իսպանիայի տնտեսական լուրջ խոցելիությունը, թեպետ Գերմանիայում ներդրողների վստահությունը բարելավվեց:
- Ասիական տնտեսությունների հեռանկարը միանշանակ չէր, քանզի Չինաստանը շարունակում է ցուցադրել 8,2 տոկոսանոց աճ, իսկ Ճապոնիան անցնում է դանդաղ աճի միջով: Այնուամենայնիվ, Ասիական բաժնետոմսերը էականորեն աճեցին:

Ամերիկյան տնտեսական վերականգնումը կապված է գործազրկության հետ՝

Անցած շաբաթ Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) կողմից անցած շաբաթ հրատարակված գնահատականի համաձայն՝ Ամերիկյան տնտեսության հեռանկարը ընդհանուր առմամբ դրական է մնում, քանզի զեկույցում նշվել է, որ տնտեսական հիմնական պայմանները շարունակում են գործել, թեպետ ԱՄՆ-ն 2013թ.-ի ԱՄՆ-ի տնտեսական աճի գնահատականը 2.1 տոկոսից նվազեցրեց մինչև 2, սակայն 2014թ. համար կանխատեսեց ՀՆԱ-ի երեք տոկոսանոց աճ: Հիմքում ընկած որոշ միտումներ ևս հակված են հաստատելու այս դրական գնահատականը, որոնց թվում են տների ավելի ամուր շուկան, կապիտալի շուկայի աճը և գործազրկության բարելավված իրավիճակը:

Կանխատեսվում է , որ տների ավելի ամուր շուկան կաջակցի տնտեսական ավելի լայն զարգացման: Վերջինս նոր թափ հաղորդեցին շինարարության թույլտվությունների վերջին տվյալները՝ տների ապագա շինարարության ինդիկատորը, ինչը ցուց տվեց, որ դեկտեմբերին աճ է գրանցվել մինչև 2008թ. բարձրագույն մակարդակները: Սպասվում է, որ տների շուկան ավելի կբարելավվի, ինչը կապված է մատակարարումները նվազեցնող տների ցածր գների և հիփոթեքների ռեկորդային ցածր տոկոսների հետ: Աշխատաշուկայի առումով, անցած շաբաթ ԱՄՆ-ի աշխատանքի դեպարտամենտը զեկույցոց, որ գործազրկության նպաստների առաջնային դմումները անցած շաբաթ անսպասելիորեն նվազեցին մինչև հնգամյա նվազագույն մակարդակը՝ 2009թ. մարտ ամսվա 667,000 նվազելով մինչև 330,000 (Տե՛ս գրաֆիկը):

Գործազրկության ընդհանուր դիմումներ (հազարներ)




Աղբյուր՝ US Department of Labor

Այդ ընթացքում գործազրկության իրավիճակը շարունակում է լուրջ առաջնահերթություն մնալ ԱՄՆ-ի Դաշնային պահուստային Բանկի համար՝ արտացոլելով վերջինիս երկակի մանդատը, որի մեջ մտնում է ինֆլյացիայի և գործազրկության հարցերի կարգավորումը: Օրինակ, տնտեսական աճի խթանման նպատակով արված ամենանշանակալի ինտերվենցիայի շրջանակներում Դաշնային Պահուստային Համակարգը գործի դրեց պարտատոմսերի գնման աննախադեպ ծրագիրը՝ գնելով ռեկորդային 3,01 տրիլիոն պարտատոմսեր, որի նպատակն էր նվազեցնել երկրի 7.8 տոկոսանոց գործազրկության մակարդակը: Բանկը ամեն ամիս ձեռք էր բերում 85 միլիարդ դոլարի պարտատոմսեր այն քանից հետո, երբ 2012թ. սեպտեմբերին նախաձեռնեց հիփոթեքների կողմից աջակցվող արժեթղթերի ամսական 40 միլիարդ դոլարի գնում, որին 2013թ. հունվարին հաջորդեց պարտատոմսերի մեկ այլ՝ 45 միլիարդ դոլարի գնում: Կանխատեսվում է Դաշնային Պահուստային Համակարգը կշարունակի այդ քանակական մեղմացման փորձը գործազրկության բարձր մակարդակը հաղթահարելու նպատակով նույն ԱՄՆ-ի տնտեսական վերականգնման մեկնարկից 4 տարի հետո:

Եթե ավելի երկար, պատմական հայացք նետենք գործազրկության տվյալներին և այն դիտարկենք 1995թ. հունվարից, ապա կտեսնենք, որ 2007 թ.-ից մինչև 2009թ.-ը գործազրկությունը ժամակավոր, սակայն լրջագույն աճ է ունեցել՝ ցուցադրելով Ամերիկյան տնտեսական ճգնաժամի շրջանային բնույթը (Տե՛ս գրաֆիկը):

Գործազրկության առաջնային դիմումներ (հազարներ)



Աղբյուր՝ US Bureau of Labor Statistics

Ավելի երկար կտրվածքով գործազրկության նպաստների դիմումների նույնիսկ ավելի սպավորիչ անկում է գրանցվել 2009թ. հունվարից մինչև 2013թ. հունվարը (Տե՛ս գրաֆիկը):

Գործազրկության նախնական դիմումներ (չորս շաբաթական միջին; հազարներ)




Աղբյուր՝ US Bureau of Labor Statistics

Այնուամենայնիվ, աշխատաշուկայի բարելավումը հիմնականում սահմանափակվում էր նրանցով, ովքեր փնտրում էին աշխատանք՝ ունենալով բարձրագույն կրթություն: ԱՄՆ-ի աշխատանքի վիճակագրության Բյուրոյի հրապարակած տվյալների համաձայն՝ 2010-2012թթ. ընկած ժամանակահատվածում աշխատանք գտնելու հարցում ավելի հաջողակ էին բարձրագույն կրթություն ունեցողները. 2012թ. մոտ 1.1 միլիոն մարդ բարձրագույն կրթությամբ

նոր աշխատանք գտան՝ հանդիսանալով 6.7 տոկոսանոց աճ, այնինչ նրանք, ովքեր ունեն դպրոցական կրթություն, կամ ավելի ցածր, աշխատանք գտնելու հարցում գրանցեցին 1.75 տոկոսանոց անկում (Տե՛ս գրաֆիկը):

Գործազրկությունը ըստ կրթության (տոկոսային փոփոխություն 2010-2012)



Աղբյուր՝ US Bureau of Labor Statistics


Տվյալները հատկապես բացասական էին դպրոցական կամ ավելի ցածր կրթությամբ մինչև քսանհինգ տարեկան անձանց համար, որոնք ԱՄՆ-ում կազմում են աշխատողների 36 տոկոսը: Օրինակ, այս խմբի համար աշխատատեղերը սկսեցին կայուն կերպով նվազել 2007թ. սկսած և 2010թ. համեմատ այս խմբի ներկայացուցիչների աշխատատեղերը 2012թ. նվազել են 770,000-ով: Ներկայումս այս խմբից մոտ երկու միլիոն մարդ գործազուրկ է: Թեպետ սա ցուցադրում է ամերիկյան տնտեսության ավելի խորը հակվածությունը դեպի կրթված աշխատուժ, ինչպիսիք անհրաժեշտ են օրինակ առողջապահական և ինժեներական մասնագիտություններում, սա նաև բացահայտում է անկում ավելի հին, ավանդական արդյունաբերական և շինարարական հատվածներում, ինչպես նաև ավելի շատ աշխատանքային պրակտիկ դասընթացների անհրաժեշտությունը այս ավելի վատ կրթություն ստացած աշխատողների համար:

Ընդհանուր առմամբ կանխատեսվում է, որ ամերիկյան ամրապանդվող տնտեսությունը կօգնի վերականգնել համաշխարհային տնտեսական աճը, քանզի համաշխարհային խոշորագույն տնտեսության վերականգնումը՝ 2012թ. վերջին երեք ամիսներին 12 տոկոսով կանխատեսվող աճով, Չինաստանի՝ համաշխարհային երկրորդ տնտեսության աճի տեմպերի վերականգնման հետ համակցված՝ նոր խթան կհանդիսանա համաշխարհային տնտեսության համար: Նույն ժամանակահատվածի համար ամերիկյան բաժնետոմսերի մեծամասնությունը աճեցին, քանզի ներդրողները ոգևորված էին տնտեսական ավելի ուժեղ տվյալներով, ինչպես նաև սպասվածից ավել կորպորատիվ եկամուտներով: Standard & Poor's 500 Index-ի բաժնետոմսերի հինգ տոկոսանոց աճը օգնեց նաև թեթևացնել Apple Inc. բաժնետոմսերի կտրուկ անկման ազդեցությունը, որը ամենամեծն էր վերջին չորս տարիների ընթացքում:

Համաշխարհային տնտեսություն

Արժույթի Միջազգայի Հիմնադրամը (ԱՄՀ) անցած շաբաթ հրապարակեց *World Economic Outlook*-ի նոր տարբերակը (www.imf.org)՝ 2013թ. կանխատեսելով համաշխարհային տնտեսության 3.5 տոկոսանոց աճ: Թեպետ այս կանխատեսումը նվազեցվել է ԱՄՀ-ի նախկին 3.6 տոկոսանոց աճի մակարդակից, այն դեռևս ավելի լավ է, քան 2012թ. 3.2տոկոսանոց աճը: Համաշխարհային տնտեսության ապագա բարելավմանը աջակցող երկու կարևոր միտում գոյություն ունի: Դրանք են՝ Չինաստանի արդյունաբերական հատվածում կտրուկ վերականգնումը, որը վերջին երկու տարիների ընթացքում աճեց ամենաարագ տեմպերով, ինչպես նաև այս ամսվա ընթացքում եվրոգոնայի սպասարկման և արդյունաբերական արտադրանքում սպասվածից ավելի քիչ անկումը:

Գործազրկության ընթացիկ դիմումներ (հազարներ)



Աղբյուր՝ IMF Global Economic Outlook

Զեկույցում տեղ գտած առաջարկությունների շարքում ԱՄՀ-ն առանձնացրեց մի առաջնահորթություն ամերիկյան կառավարության համար «խուսափել կարճաժամկետ դրամային չափից շատ կոնսուլիդացիայից», բարձրացնել «պարտքային առաստաղը» ամերիկյան պարտքի սահմանափակման առումով, և համաձայնություն տալ «վստահելի հարկաբյուջետային համախմբման միջնաժամկետ ծրագրին»՝ կենտրոնանալով իրավունքների տրամադրման և հարկային բարեփախումների վրա: Եվրոգոնայի համար ԱՄՀ-ն առանձնացրեց «երկարաձգվող լճացման» հետ կապված ռիսկերը, և նշեց, որ եվրոպական առաջնորդները պետք է շարունակեց բարեփոխումները, ամրապնդեն «կարգավորման փորձերը շրջապատող երկրներում», ինչպես նաև ավելի հեռուն գնացող քայլեր ձեռնարկել բանկային ամբողջական միության և ֆիսկան ավելի լայն ինտեգրացմանը հասնելու նպատակով: Վերադառնալով Ասիային՝ ԱՄՀ-ն որպես առաջնահերթություն ճապոնիայի համար առանձնացրեց «տնտեսական աճի և ինֆլյացիայի խնդիրները ավելի ամրիցիոզ դրակային քաղաքականության միջոցով» և առաջարկեց, որ ճապոնիայի կառավարությունը «տնտեսական աճը խթանի կառուցվածքային բարեփոխումների միջոցով»: Չինաստանի համար ԱՄՀ-ն նշեց, որ «արագընթաց տնտեսական աճը շարունակական դարձնելու նպատակով պետք է իրականացնել շուկայականին հակված

կառուցվածքային բարեփոխումներ», ինչպես նաև «կայունացնել տնտեսությունը ավելի շատ դեպի անհատական սպառում»: Հարավային Կովկասի և Կոնտրոնական Ասիայի տարածաշրջանների համար 2013թ. ԱՄՀ-ի հեռանկարը նպաստավոր է մնում՝ մեծամասամբ կապված նավթի բարձր գների թողած ազդեցության հետ, որից շահում են այդ տարածաշրջանների էներգիա արտադրողները և քանզի ապրանքների գները և գումարային փոխանցումները աջակցում են տնտեսական աճը:

Միջազգային այլ զարգացումներից կարելի է առանձնացնել Ուկրաինայի էկոնոմիկայի նախարար Վոլոդիմիր Լոնովիի զգուշացումը, որ Ուկրաինայի կառավարությունը «կանգնած է 2013թ. իր արտասահմանյան վարկային պարտավորությունները չկատարելու իրական վտանգի առջև»: Լոնովին մտահոգություն հայտնեց Ուկրաինայի կենտրոնական բանկի արժույթային պահուստների մակարդակի նվազման վերաբերյալ, որոնք այժմ հավասար են 25 միլիարդ դոլարի այն բանից հետո, երբ ըստ որոշ տեղեկությունների՝ անցած տարի պահուստներից մոտ 10 միլիարդ դոլար ծախսվել էր տեղական շուկայում ամերիկյան դոլարի աճող պահանջարկը բավարարելու համար: Նա նաև ավելացրեց, որ այժմ Ուկրաինայի կառավարությունը 2013թ. կանգնած է մարտահրավերի առջև բավարարելու Ռուսաստանից, անհատ ներդրողներից և միջազգային վարկատուներից վերցրած 9,3 միլիարդ դոլարի վճարումները:

Եվրոպական հեռանկար

Համաձայն ԱՄՀ-ի Համաշխարհային Տնտեսական Հեռանկարի՝ սպասվում է, որ 17 տնտեսություններից բաղկացած եվրոգոնան 2013թ. կգրանցի 0.2-անոց անկում: Այս կանխատեսումը փոխարինելու է գալիս ԱՄՀ-ի՝ ավելի վաղ՝ 2012թ. հոկտեմբերին արված կանխատեսմանը, համաձայն որի՝ Եվրոգոնայի տնտեսությունները պետք է գրանցեին 0.2-անոց աճ: ԱՄՀ-ն 2013թ. կանխատեսեց Գերմանիայի տնտեսության 0,2 տոկոսանոց աճ, իսկ հաջորդ տարի աճը կկազմի 1,4 տոկոս: Կանխատեսվում է, որ Իսպանիայի տնտեսությունը այս տարի կկրճատվի 1,5 տոկոսով 2014թ. 0,8 տոկոս աճելուց առաջ: Իտալիան 2013թ. կունենա 1 տոկոսանոց անկում, իսկ 2014թ.՝ 0,5 տոկոս աճ:

Եվրոպական ներդրողները, սակայն, անցած շաբաթ վստահության նոր ալիք ստացան Եվրոպական Կենտրոնական Բանկի (ԵԿԲ) նախագահ Մարիոն Դրագիի այն հայտարարության շնորհիվ, որ եվրոպական պատրքի վատագույն մասը կարող է ավարտվել: Մրան գումարվեց Գերմանիայի՝ Եվրոպայի ամենախոշոր տնտեսության ներդրողների նշանակալիորեն բարելավված վստահությունը, որը աճեց մինչև իր բարձրագույն մակարդակները վերջին երեք տարիների ընթացքում:

Կանխատեսվում է, սակայն, որ ամսվա վերջ հրապարակվելիք տվյալները 2012թ. վերջին քառորդի համար ցույց կտան եվրոգոնայի տնտեսությունների 0.4 տոկոսանոց անկում: Սա կներառի եվրոգոնայի ռեկորդային բարձր 11.8 տոկոսանոց գործազրկությունը, ինչպես նաև պետությունների կողմից գործադրվող տնտեսման խիստ միջոցառումները և բյուջետային լուրջ կրճատումները, որոնք իրենց հետևից կբերեն սպառողական ծախսերի և վստահության նվազում: Անցած շաբաթ հրապարակված տվյալների համաձայն՝ Իսպանիան շարունակում

Հատոր II Զեկույց 4

Է մնալ Եվրոպայի ամենախոցելի տնտեսություններից մեկը: Գործազրկությունը 2012թ. վերջին քառորդում աճեց մինչև ռեկորդային՝ ավելի քան 26 տոկոսանոց մակարդակը, ինչը նշանակում է, որ ավելի քան 6 միլիոն մարդ գործազուրկ է:

Հայացք Ասիային՝

Ասիական տնտեսությունների հեռանկարը միանշանակ չէ, քանզի չինական տնտեսությունը այս տարի կգրանցի 8,2 տոկոսանոց աճ, իսկ 2014թ.՝ 8,5 տոկոս՝ հանդսանալով աճի երկարաժամկետ միտում, այն ժամանակ, երբ Ճապոնիան շարունակում անցնել դանդաղ տնտեսական աճի միջով, որը այս տարի կկազմի 1,2 տոկոս՝ պայմանավորված հիմնականում նոր ֆիսկալ և դրամային միջացառումներով, որոնց նպատակն է խթանել տնտեսությունը: Կանխատեսվում է, որ Ճապոնիան 2014թ. կունենա 0,7 տոկոսանոց աճ: Ասիական արժեթղթերը անցած շաբաթ էական աճ գրանցեցին՝ պայմանավորված ամերիկյան տնտեսության աճով, ինչպես նաև Ճապոնիայի նվազող սպառողական գները ավելացրին ճնշումը Ճապոնիայի կառավարության վրա գործադրել ավելի մեծ դրամային խթանիչներ, որը իր հերթին խթանեց Ճապոնական պարտատուների շարունակական շաբաթական աճը, որը տևեց մոտ երեք ամիս՝ հանդիսանալով ամենաերկար շարունակական աճը 50 տարիների ընթացքում:

Ապրանքային շուկա՝

Նավթի համաշխարհային գները անցած շաբաթ աճեցին արդեն յոթերորդ շաբաթն անընդմեջ, որը ամենաերկար աճ է հանդիսանում վերջին 4 տարիների ընթացքում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության վերականգնման նշաններով և հում նավթի պահուստների և պաշարների կրճատմամբ: Նավթի համաշխարհային շուկայում մոտ Վենեսուելական 10 միլիարդ դոլարանոց նավթային արդյունաբերությունը հինգ տարիների ընթացքում ունեցավ իր առաջին անկումը ֆինանսավորման և ներդրումների ասպարեզում այն բանից հետո, երբ իր ամենամտերին գործընկերներից Չինաստանը, Հնդկաստանը և Ռուսաստանը մտահոգություն արտահայտեցին Վենեսուելայի նախագահ Հուգո Չավեզի առողջական թույլ վիճակի պատճառով ստեղծված քաղաքական անորոշության վերաբերյալ: Արտասահմանյան ֆինանսավորման և ներդրումների նվազումը այժմ կասկածի տակ է դնում երկրի ունակությունը վերականգնել նավթային արտադրանքն ու արդյունաբերությունը, որը 2011թ նվազեց 13 տոկոսով և կազմեց օրեկան 2,7 միլիոն բարել, երբ 1999թ. Չավեզը եկավ իշխանության:

Բնական գազի շուկայի կարևոր զարգացումներից կարելի է առանձնացնել անցած շաբաթ Ուկրաինայի և Royal Dutch Shell ընկերության միջև սրբազրված 10 միլիարդ դոլար արժողությամբ պայմանագիրը, որի նպատակն է զարգացնել Ուկրաինայի արևելքում գտնվող Յուզիվսկա բնական գազով հարուստ դաշտավայրը՝ կիրառելով նոր տեխնոլոգիա, որը հիմնված հիդրավլիկ սկզբունքի վրա: Ուկրաինական թերթաքարային գազի պաշարները գնահատվում են 1,2 տրիլիոն կուբամետր՝ գրավելով երրորդ տեղը Եվրոպայում պաշարների ծավալունեով: Ուկրաինական պաշտոնյաները բացատրեցին, որ Shell-ի կողմից ներդրումների ծավալը կկազմի 10 միլիարդ դոլար, սակայն կարող են հասնել նաև մինչև 50 միլիարդ դոլար՝ կախված դաշտավայրի պայմաններից:

Համաշխարհային ապրանքային շուկայի այլ զարգացումներից կարելի է առանձնացնել ուրանի խոշորագույն արտադրող Ղազախստանի զեկույցը, համաձայն որի՝ վերջինս ուրանի արտադրության մեծ նոր ռեկորդ է գրանցել՝ 2012թ. հասնելով մինչև 20,900 տոննա, ինչը գերազանցում է 2011թ. 19,400 տոննա մակարդակը: Արտադրության նոր թվերը 2012թ. բարձրացրին Ղազախստանի մասնաբաժինը ուրանի համաշխարհային արտադրության մեջ մինչև տպավորիչ 37 տոկոս: Ղազախստանը իր արտադրած ուրանի մեծ մասը վաճառում է Ասիայում և վերջինիս խոշորագույն գնորդներ են Չինաստանը, հարավային Կորեան և Հնդկաստանը:

Հայաստանյան իրադարձություններ՝

Համաձայն Հայաստանի Ազգային վիչակագրական Ծառայության հրապարակած վերջին տվյալների, Հայաստանի տնտեսությունը 2012թ. աճեց 7,2 տոկոսով: Աճ գրանցեցին գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքները, ինչպես նաև 0,2 տոկոսով աճեց շինարարական հատվածը: Մեկ այլ զեկույցում, որը հրապարակվեց անցած շաբաթ, անկախ պետությունների համագործակցության՝ ԱՊՀ-ի վիճակագրական ծառայությունը հայտնեց, որ 2012թ. առաջին ինը ամիսներին Ռուսաստանից Հայաստան գումարային և ֆինանսական փոխանցումների ծավալը հասավ 877 միլիոն դոլարի: ԱՊՀ-ի անդամ պետությունների շարքում Հայաստանը 6-րդ տեղն է զբաղեցնում Ռուսաստանից գումարային փոխանցումների առումով՝ զիջելով Ուզբեկստանին, Տաջիկստանին, Ուկրաինային, Մոլդովային և Ղրղզստանին:

Անցած շաբաթ Միհրան Պողոսյանը՝ Դատական ակտերի հարկադիր կատարման պետական ծառայության պետը, ում ղեկավարած կառույցը օրենքի հարկադիր կատարման կառույց է, որը լիազորված է ի կատար ածել դատարանով հաստատված՝ սեփականության և ակտիվների բռնագրավումը, զեկույցեց, որ 2012թ. 20 տոկոսով ավելացել է ակտիվների բռնագրավված մակարդակը: Պաշտոնական թվերի համաձայն՝ պետական ծառայությունը բռնագրավել է ավելի քան 37 միլիոն դոլար (15 միլիարդ դրամ) ակտիվների և սեփականության տեսքով: Գործերի մեծամասնությունը ներառում է տների, անշարժ գույքի և Հայաստանի քաղաքացիների այլ անձնական իրերի բռնագրավում և գրավի վճարի գրկում կոմերցիոն բանկերին վարկերը չմարելու պատրաստով:

Վերոնշյալ տանտերերի մեծամասնությունը ցածր եկամուտ ունեցող գյուղացիներ էին, որոնք չեն կարողանում վճարել վարկերը և որոնք իրենց գյուղական սեփականությունը տրամադրել էին որպես գրավ վարկերի համար: Թեպետ գյուղատնտեսական վարկերի և վարկային ծրագրերի մակարդակները և հասանելիությունը վերջին տասը տարիների ընթացքում աճել է, մասնավոր վարկառուներից շատերը չեն կարողանում վճարել նախանշված օրերին, ինչը պայմանավորված է եղանակային անկանխատեսելի պայմանների, սերմերի և պարարտանյութերի գների անսպասելի տատանումների, ինչպես նաև ցածր բերքատվության հետ:

-Ռիչարդ Գիրագոսյան



TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ աշխարհի 20 երկրներում ունենալով 150 գրասենյակներ: Հիմնադրված լինելով 1994թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է համարվում խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում: